Ինչպես «պաշտպանել» հայաստանյան ժողովրդավարությունը

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Բանավեճ իմ և իմ միջև

Միջազգային ամենատարբեր համաժողովներում հայ դիվանագետները, պաշտոնյաները, հասարակական հատվածի ներկայացուցիչները, մշակույթի գործիչները, լրագրողները և այլոք հաճախ են կամա թե ակամա հանդես գալիս Հայաստանը ներկայացնողների, Հայաստանի շահերը պաշտպանողների դերում: Գաղտնիք չէ, որ այդօրինակ քննարկումներին Ադրբեջանը սովորաբար ներկայանում է «կազմ ու պատրաստ», հիմնականում մեծաքանակ պատվիրակությամբ, և հաճախ էլ հանդես է գալիս Թուրքիայի հետ, այսպես ասած, ձայն ձայնի տված:

Երկակի իրավիճակ է առաջանում Հայաստանը ներկայացնողի համար նման պայմաններում: Մի կողմից իբրև երկրի ժողովրդավարացման, եվրաինտեգրման կամ խոսքի ազատության խնդիրներով մտահոգ մեկը՝ դու հակված ես լինել բաց, քննադատող ու լուծումներ փնտրող, ձեռնպահ ես մնում իրականությունը վարդագույն ակնոցների պրիզմայով ներկայացնելու գործելաոճից, մյուս կողմից՝ տեսնում ես, որ որքան քննադատաբար ես մոտենում քո երկրում առկա խնդիրներին, այնքան ավելի շատ են դրանք հարևանների կողմից օգտագործվում Հայաստանի դեմ՝ ներքին զարգացումների խթանմանը միտված որևէ քննարկում վերածելով հակահայ քարոզչության: Համաձայնեք՝ իրականությունը հենց այսպիսին է, և այս իրականությունը հաճախ է ներքին ընտրության առջև կանգնեցնում միջազգային համաժողովների հայաստանյան մասնակիցներին:

Թեժ է լինելու

2008թ. ապրիլից հետո Հայաստանն ուրիշ Հայաստան է այլևս, համենայնդեպս այդպես ընկալվում է դրսում, թե ներսում: Եվ եթե մարտյան իրադարձությունների ժամանակ բոլորը շունչները պահած լուռ հետևում էին, թե ինչ է լինելու հետո, հիմա արդեն եկել է ժամանակը, երբ բոլոր հարթություններում վերջին իրադարձությունների և ընդհանրապես հայաստանյան ժողովրդավարության ներկայի վերաբերյալ բուռն քննարկումներ են տեղի ունենալու, վերլուծություններ են կատարվելու և գնահատականներ են տրվելու:

Եվ եթե երկրի ներսում անխնա քննադատանքը զսպելու կարիք ամենևին էլ չկա, այլ ճիշտհակառակը, ապա դրսում ներկայանալուց դիմություն, ընդդիմություն, թե հասարակական հատված ներկայացնող յուրաքանչյուր ոք ներքին մտահոգության առիթներ է ունենալու: Այսպիսիիրավիճակը դիպուկ է նկարագրում մեր հասարակական գործիչներից մեկը. «Միջազգային կառույցներում աշխատանքի ժամանակ, եթե դու պարկեշտ մարդ ես, ստիպված ես միշտ ճիշտն ասել: Դա էլ որ ասում ես, ինքդ քեզ վատ ես զգում»:

Հետևաբար նման իրավիճակում ինքդ քեզ ուղղող հարցը բոլորի մոտ էլ նույնն է լինելու. կա՞ արդյոք կարելիի սահման:

Հասկանալ նպատակը

Հարցին պատասխանելու համար նախ հարկ է հասկանալ, թե իրականում որն է քո նպատակը: Իսկ նպատակները կարող են ամենատարբեր լինել. սկսած օտարների մոտ հայրենիքի «թասիբը» պահելուց, մինչև եվրոպաներում ներքին հակառակորդներին մի լավ դաս տալը: Սակայն եթե մի հարթություն էլ ես վեր բարձրանում իրական նպատակների ծառում, ու հասկանում

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

ես, որ իվերջո քո և մեր ողջ հասարակության նպատակը մեր երկրում դրական փոփոխություններ ունենալն է, ապա որևէ բան կոծկելը պարզապես անիմաստ ու արջի ծառայություն է դառնում:

Եթե մենք ուզում ենք փոփոխություններ տեսնել մեր երկրում, ապա պիտի կարողանանք ազատորեն խոսել թերությունների մասին՝ ներսում, թե դրսում: Կոծկելու կամ մեղմելու գործելաոճի արդյունքում ժամանակի ընթացքում ինքդ քեզ ու հանրությանն էլ կհավատացնես, թե խնդիրները չկան կամ մեղմ են: Իսկ այդպես արդյունքի հասնել պարզապես հնարավոր չէ:

Ուրեմն կապ չունի, դու պետական բարձրաստիճան պաշտոնյա ես, ընդդիմադիր գործիչ, թե հասարակական ակտիվիստ, կապ չունի, դու արտահայտվում ես Հայաստանում, թե Ստրասբուրգում, քո քայլերը պիտի ուղղված լինեն հանրային կյանքի առողջացմանը, ժողովրդավարության հաղթանակի նկատմամբ հավատի կայացմանը, հետևաբար դու իրականության մութ կողմերը մեղմելու, կամ առկա դրականը սևացնելու օրակարգ ունենալ պարզապես չես կարող:

Ի վերջո ամենասուր ինքնաքննադատությամբ կարողանում են հանդես գալ ամենաուժեղներն ու սխալներն ուղղելու հարցում ամենապատրաստակամները: Սա հասկանում են բոլորը: Իսկ սեփական սխալներին ակնհայտորեն մարտահրավեր նետածին ոչ ոք չի խփում, ընդհակառակը, արձագանքը լինում է մեկնած ձեռքի տեսքով: Գաղտնիք չէ, որ ցայսօր միջազգային տարբեր կառույցներում հայկական պատվիրակությունները ստիպված են եղել գրեթե միշտ հանդես գալ Հայաստանի հասցեին հնչող քննադատությանը պատասխանողի դերում: Հաստատ ոչ դուրեկան դերում: Կարծես գործելաոճի փոփոխությունը հրամայական է դարձել:

Այդ դեպքում ինչպե՞ս վարվել ադրբեջանցիների հետ: Այդ դեպքում ոչինչ էլ պետք չի լինի անել: Միայն հարկ կլինի ցանկացած քննարկման սկզբում ակտիվ լինել, հասնել «խաղի կանոնների» ամրագրմանը, հստակ տարանջատել հանրային շահի և ազգային շահի սահմանները, ամրագրել, որ քննարկումը հանրային շահի տիրույթում է և փորձել ողջ քննարկումը պահել հենց այդ հարթությունում: Բայց սա արդեն ավելի շատ տեխնիկական խնդիր է և կախված է Հայաստանը ներկայացնողի ճկունությունից:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2008թ-ի ապրիլի 7-ին կայացած՝ «Ժողովրդավարական ինստիտուտների իրավիճակը Հայաստանում» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ: